ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼՊԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն «ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հիմնադիր-տնօրեն, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալպիկ Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հրաչյա Քոչարի փողոց հ.20 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԼՊԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ալպիկ Մկրտչյանը ծնվել է 1937թ. փետրվարի 16-ին Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում: Ավարտել է Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոցը: 1959 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1979-1980 թվականներին եղել է ԵՊՀ Կոնդենսված միջավայրերի ֆիզիկայի ինստիտուտի փոխտնօրեն, 1980 թվականից՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական հիմնախնդիրների ինստիտուտի բաժնի վարիչ, 1981-2006 թվականներին՝ տնօրեն, 1986 թվականից, միաժամանակ՝ ՀՊՃՀ գիտական սարքաշինության ամբիոնի վարիչ, 1996 թվականից՝ նաև ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

Ալպիկ Մկրտչյանը Գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի հիմնադիրն է: Նրա անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ Հայաստանում և արտերկրում կատարվել են գիտական բազմաթիվ հայտնագործություններ, մշակվել են մի շարք նոր գիտահետազոտական մեթոդներ և գիտական սարքավորումներ: Ալպիկ Մկրտչյանի կողմից կատարված գիտական հետազոտությունների հիման վրա ձևավորվել և ինտենսիվ զարգանում է ֆիզիկայի նոր բնագավառ՝ ակուստաֆիզիկան: Նա գիտական ղեկավար է եղել բազմաթիվ մեծածավալ միջազգային դրամաշնորհների, ակտիվորեն զբաղվել է արտասահմանյան երկրների հետ գիտաարտադրական կապերի ստեղծման և զարգացման հարցերով:

Ալպիկ Մկրտչյանը անգնահատելի ավանդ ունի գիտամանկավարժական և գիտակազմակերպչական աշխատանքներում, հեղինակ է ավելի քան 300 գիտական հոդվածների, հեղինակային իրավունքների և մենագրությունների: Ակադեմիկոսը հայտնի է նաև իր հասարակական գործունեությամբ: Նա մեծ աշխատանք է կատարել Հայաստանի շրջաններում դատարկ գյուղերի վերականգման ու վերաբնակեցման, Արցախում սոցիալ-տնտեսական ու գիտամանկավարժական բազայի զարգացման ուղղությամբ:

Գիտական ոլորտում ունեցած նվաճումների համար Ալպիկ Մկրտչյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով, «Անանիա Շիրակացի» մեդալով, ԵՊՀ-ի, ԵՊՃՀ-ի, Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալներով, ՌԴ Պրոխորովի անվան Ինժեներական ակադեմիայի կողմից Ա.Ի. Բերգի, Ն.Ն. Սեմյոնովի և Յու.Ա. Գագարինի անվան ոսկե մեդալներով, Գեորգի Պոբեդոնոսեց ոսկե մեդալով: Ազգին մատուցած ծառայությունների համար ակադեմիկոս Ալպիկ Մկրտչյանն արժանացել է Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինի պարգև-հուշամեդալին: Ստացել է Կուրչատովի անվան մրցանակ: Պարգևատրվել է Դավիթ Անհաղթի արծաթե մեդալով:

Ալպիկ Մկրտչյանը մահացել է 2019թ. հոկտեմբերի 22-ին:

Ալպիկ Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հրաչյա Քոչարի փողոց հ.20 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Ա. Մկրտչյանի այրու՝ տիկին Հայկանուշ Մկրտչյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Ալպիկ Մկրտչյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ